Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի Ա. Բակունցի անվան թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի շախմատ (15 դասաժամ) առարկայի ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 14),
2. Բարձրագույն կրթության մանկավարժական որակավորման աստիճանը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից,
3. Անձը հաստատող փաստաթուղթ,
4. Ինքնակենսագրություն,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են նաև զինգրքույկը:

Փաստաթղթերի պատճենները ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ.-ի ապրիլի 10-ից մինչև ապրիլի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9$^{:00}$-ից 15$^{:00}$-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2024թ.-ի ապրիլ 26-ին՝ ժամը 14^{00}–ին,** Գորիսի Ա. Բակունցի անվան հ.1 ավագ դպրոցում, հասցեն՝ ք. Գորիս, Անկախության 64:

Տեղեկությունների համար զանգահարել (077 72 38 87) հեռախոսահամարով: